THOMAS EDISON ELEMENTARY SCHOOL

"The Brightest School in Town"

Mrs. Nicole Cody, Principal
Mrs. Jennifer Flores, Curriculum Specialist
Mrs. Jennifer Goldenberg, ELD Specialist

Instructional Assistants:
Ms. Armida Lara
Mrs. Veronica Del Castillo

Մայրենի Լեզվի Հարցաթերթիկ (HLS).

Կալիֆոռնիայի նահանգի դպրոցում երեխաներին արձանագրելիս, Կալիֆոռնիայի նահանգը պահանջում է ծնողներից լրացնել մայրենի լեզվի հարցաթերթիկ: **Դրա նպատակն է որոշել, թե արդյոք պետք է երեխան անգլերեն լեզվի հմտության քննություն հանձնի:**

Մայրենի լեզվի հարցաթերթիկը լրացնելից պետք է պատասխանել 4 հարցի.

1. *Ո՞ր լեզվով է ձեր երեխան առաջին անգամ խոսել:*
2. *Ո՞ր լեզվով էք խոսում դուք ձեր երեխայի հետ տանը:*
3. *Ո՞ր լեզվով է ձեր երեխան հաճախակի խոսում տանը:*
4. *Ո՞ր լեզվով են խոսում տան մեծերը իրար հետ:*

Եթե #1, #2 կամ #3 հարցերի պատասխանը անգլերեն լեզվից բացի մեկ այլ լեզու է և ձեր երեխան առաջին անգամ է արձանագրվում Կալիֆոռնիայի Նահանգի պետական դպրոցում, նա պետք է հանձնի *Կալիֆոռնիայի Նահանգի Անգլերեն Լեզվի Հմտության Սկզբնային Քննությունը (IELPAC)*, քանի որ այն պահանջվում է Կալիֆոռնիայի նահանգի կողմից: Եթե ձեր երեխան արձանագրված է եղել Կալիֆոռնիայի Նահանգի պետական մեկ այլ դպրոցում, մենք կապ կհաստատենք այդ դպրոցի հետ՝ երեխայի լեզվի նշանակման արդյունքների հետ ծանոթանալու համար:

Ինչպե՞ս են աշակերտները ճանաչվում որպես անգլերեն սովորողներ (English Learners).

IELPAC քննությունը հանձնելուց հետո, արդյունքում կստանանք երկու հնարավոր պատասխան.

1. Ձեր երեխան կստանա «հմուտ» արդյունք.
   - Դուք ծանուցում կստանաք, որ ձեր երեխան նախնականորեն հմտությամբ է տիրապետում անգլերեն լեզվին (IFEP):
   - Ձեր երեխան չի ստանա ELD ծրագրի ծառայություններ և դասավանդում:
2) Ձեր երեխան կստանա «հմուտ» մակարդակից ցածր արդյունք.
   - Դուք ծանուցում կստանաք, որ ձեր երեխան անգլերեն սովորող է (EL):
   - Ձեր երեխան կստանա ELD ծրագրի ծառայություններ, այսինքն լեզվի լրացուցիչ օգնություն և դասավանդում դասարանի ուսուցչի կամ ELD օգնականի կողմից, մինչև վերադասակարգվելը:
   - Ձեր երեխայի դասարանի ուսուցիչը կմնա նույնը և չի փոխվի հիմնվելով այս արդյունքների վրա:

**Եթե ձեր երեխան սովորել է Կալիֆոռնիայի նահանգի մեկ այլ պետական դպրոցում, մենք ձեռք կբերենք նրա քննության արդյունքները:*

**Ձյուրընկալել www.elpac.org կայքը հավելյալ տեղեկություն ստանալու համար:*

ELD դասավանդում և օգնություն

Անգլերեն Լեզվի Զարգացումը (ELD) կառուցվածքային մեթոդ է, որի դասավանդումը կատարվում է անգլերեն լեզվով և հարստացնում է բառապաշարը, լեզվի հասկացողությունը և սահունությունը: Ուսուցիչը և ELD օգնականները աշխատում են փոքր խմբով հմտության մակարդակը բարելավելու համար: Մանկապարտեզում, ELD դասաժամը տևում է օրական 20 րոպե, իսկ 1-5-րդ դասարաններում՝ 30 րոպե, օգտվելով *BenchmarkAdvance* անգլերեն լեզվի քերականության ծրագրից, լրացուցիչ ռեսուրսների հետ միասին:

Դասարանի ուսուցիչը պատասխանատու է ELD դասավանդման համար և տարբեր մեթոդներ է օգտագործում, որոնցից է SDAIE (Անգլերեն Լեզվով Մշակված Կրթական Դասավանդում), որը թույլ է տալիս երեխային հասկանալ դասի բովանդակություն և բարելավել անգլերեն լեզվի իմացությունը: ԲԴՄԾ-ի բոլոր ուսուցիչներից պահանջվում է հատուկ վերապատրաստում անցնել այդ մեթոդը անգլերեն սովորողներին դասավանդելու համար:

Վերադասակարգման գործընթաց

Վերադասակարգումը այն գործընթացն է, որի ընթացքում անգլերեն սովորողը վերադասակարգվում է անգլերեն լեզվին սահունորեն տիրապետողի (RFEP), նահանգի և շրջանի կողմից հաստատված (Կալիֆոռնիայի Կրթական կոդեքսի 313[f] կետ) չափանիշներին բավարարելուց հետո: Ներքոհիշյալ չափանիշները հիմնված են Կալիֆոռնիայի Կրթական գրասենյակի (CDE) ուղեցույցների վրա: Պետք է բավարարել բոլոր 4 չափանիշներին.



Անգլերեն Լեզվի Խորհրդատու Կոմիտեի նպատակը (ELAC)

ELAC-ի նպատակն է անգլերեն սովորող աշակերտների ծնողներին հնարավորություն տալ ծանոթանալ աշակերտներին հատկացվող ծրագրերի հետ: ELAC-ը խորհուրդ է տալիս տնորենին և դպրոցի աշխատակազմին անգլերեն սովորող աշակերտների համար եղած ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ: Նաև, առաջարկություններ է անում դպրոցի կոմիտեին (School Site Council) աշակերտների ձեռքբերումներ կատարելու դպրոցի միակ ծրագրի համար: Ժողովների ընթացքում, ծնողները հնարավորություն ունեն առաջարկություններ անել և պատասխան ստանալ իրենց հետաքրքրող հարցերին: Ինչպես նաև, խոսվում է տարբեր թեմաների շուրջ, որոնցից են ընթերցանությունն ու մաթեմատիկան, լեզվի ձեռքբերման փուլերը և տնային աշխատանքը:

Հավելյալ տեղեկությունների կամ հարցերի դեպքում, խնդրում են էլեկտրոնային նամակ ուղարկել ELD մասնագետ, տիկին Էնջի Դ'Մելլոյին *angiedmello@burbankusd.org* հասցեով: